ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/361 «24» 11 2025 թ.

«Պահեստ 555» ՍՊԸ
(ՀՎՀՀ 03570207)
ՀՀ Ք. Աբովյան, 3 մկրշ. 45շ. 13
էլ. հասցե՝ tender@redstore.am

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ նաև՝ Գնորդ) և «Պահեստ 555» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Վաճառող) միջև 21.08.2025թ.-ին թվականին կնքվել է ապրանքի մատակարարման թիվ «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/ԱԽ-14» ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի համաձայն՝ մասնակիցը մատակարարման փուլում պետք է տրամադրի «MAF» կամ ՀՀ-ում ավտորիզացված «DAF» հավաստագիր:

Պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել «Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 70 օրացուցային օր»:

Պայմանագրի 2.1 կետի 2.1.1 ենթակետի համաձայն՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել

Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

«Պահեստ 555» ՍՊ ընկերության կողմից, Պայմանագրով նախատեսված ժամկետում՝ 70 օրացուցային օրում, ինչպես նաև հրավերով թույլատրելի խախտման ժամկետում՝ 15 օրում չի մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված քանակների ապրանքը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ՆԳՆ և «Պահեստ 555» ՍՊ ընկերության միջև կնքված թիվ «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/ԱԽ-14» ծածկագրով Պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի ամբողջությամբ լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Պահեստ 555» ՍՊ ընկերության տրվում է 5 օրացուցային օր 93 840 /իննսուներեք հազար ութ հարյուր քառասուն / ՀՀ դրամ տույժը և 55 200 /հիսունհինգ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ սահմանված տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար 1 800 000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման 1 200 000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ փոխանցել ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N 900008000698 և 900008000664 հաշվեհամարներին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ «Պահեստ 555» ՍՊ ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին
Կազմ.՝ Ա. Խաչատրյան
Հեռ. /010/ 59 67 89